Ճիշտ տեղեկությունները կօգնեն ընթացք տալ Ձեր գործին

Խնդրում ենք ստորև նշվածներից որքան հնարավոր է շատ կետերի պատասխանել՝ Ձեր, Ձեր անչափահաս երեխա(ներ)ի և մյուս ծնողի վերաբերյալ.

- լրիվ անունները, ինչպես փաստաթղթերում է և օգտագործվող այլ անունները.
- ծննդյան ամսաթվերը.
- ծննդյան վկայականները.
- ամուսնության վկայականները.
- սոցիալական ապահովագրության համարները.
- հասցեները.
- տեղեկություն աշխատանքի մասին, այդ թվում՝ աշխատանքային կենսագրությունը.
- եկամուտը և ակտիվները (գույքը, մեքենաները, նավակները).
- երեխայի ապրուստադրամի վճարման տվյալները.
- դատարանի բոլոր գործող որոշումները (ժամանակավոր կամ վերջնական), այդ թվում՝ երեխայի ապրուստադրամի վերաբերյալ որոշումները, ապահարզանի փաստաթղթերը, երեխային այցելելու թույլտվության մասին որոշումները, սահմանափակման որոշումները և երեխաներին վերաբերող ցանկացած այլ որոշում:

Դուք կարող եք օգնել

Որքան ամբողջական լինի Ձեր տրամադրած տեղեկությունը, այնքան արագ Դուք կտեսնեք արդյունքները:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

Քիմբերլի Բելշե, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

Գրետա Ուալաս, երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 246 (11/05)
ARMENIAN

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Երեխայի ապրուստադրամի գործի բացումը

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Ինչ կարող եք ակնկալել այն բանից հետո, երբ Ձեր գործը բացվի

Այն բանից հետո, երբ բացվի Ձեր գործը, մենք կգբաղվենք Ձեր կողմից մեզ տրամադրված տեղեկություններով: Գործը բացելուց հետո երեխաների օգնության տեղական գործակալությունը Ձեզ նամակ կուղարկվի, որը կպարունակի Ձեր գործի վերաբերյալ տեղեկությունները:

Մյուս ծնողին գտնելը

Եթե Դուք չգիտեք մյուս ծնողի հասցեն, մենք կփորձենք գտնել նրան: Ցանկացած տեղեկություն, որ Դուք կարող եք տրամադրել մեզ (ինչպես, օրինակ՝ ներկա կամ անցյալ աշխատանքները, հասցեները կամ եկամուտները) կօգնեն մեզ մյուս ծնողին գտնելու հարցում

Հայրության հաստատումը

Երեխաների օգնության տեղական դեպարտամենտը կարող է օգնել Ձեզ հաստատել հայրությունը՝ Հայրության հնարավորության ծրագրի հայտարարագրի միջոցով կամ դատարանի որոշմամբ: Հայտարարագիրն իրենից ներկայացնում է հարցաթերթիկ, որը լրացվում է և պետք է ստորագրվի երկու ծնողի կողմից էլ, որպեսզի առանց դատարանի հաստատվի երեխայի հայրությունը: Եթե երեխայի հայրությունը հարցականի տակ է առնված, երեխաների օգնության տեղական գործակալությունը կարող է օգնել ստուգում անցկացնելու հարցում:

Երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշում ստանալը

Դատական գործ կհարուցվի՝ չխնամող ծնողից երեխայի ապրուստադրամը գանձելու համար: Երեխայի ապրուստադրամի չափը, ի թիվս այլ գործոնների, կախված է նաև յուրաքանչյուր ծնողի եկամուտի չափից և այն ժամանակից, որը յուրաքանչյուր ծնող անցկացնում է երեխայի հետ:

Երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշման կիրարկումը

Երեխաների օգնության տեղական գործակալությունը երեխաների ապրուստադրամը գանձելու մի շարք ձևեր ունի: Ամենատարածված ձևը չխնամող ծնողի աշխատավարձի մի մասը պահելն է:

Միջնահանգային գործերը

Երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատական որոշումները կարող են կիրարկվել անգամ այն դեպքում, երբ մյուս ծնողն ապրում է մեկ այլ նահանգում:

Հայտնեք մեզ փոփոխությունների մասին . . .

Եթե ստորև նշված որևէ կետի վերաբերյալ փոփոխություն է տեղի ունեցել Ձեր կամ մյուս կողմի համար, զանգահարեք մեզ.

- հասցեն.
- աշխատանքը.
- խնամակալությունը/այցելությունները.
- դատարանի որոշումները:

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Երեխայի ապրուստադրամի գործ բացելը

Երեխաների օգնության տեղական գործակալությունն անվճար ծառայություններ է տրամադրում անչափահաս երեխաների ծնողներին, խնամակալներին և խնամողներին: Մեր ծառայությունները տրամադրվում են անկախ հոգեկան վիճակից և եկամուտից:

Գործերը երկու տիպի են լինում՝ ոչպ ետական օգնություն և պետական օգնություն:

Ոչ-պետական օգնության գործերը

Մենք գործին ընթացք կտանք, երբ Դուք լրացնեք ծառայություններ ստանալու դիմումը:

Պետական օգնության գործերը

Եթե Դուք պետական օգնություն եք ստանում, ապա մենք ընթացք կտանք գործին այն ժամանակ, երբ ուղեգիր ստանանք այն շրջանի նպաստների բաժանմունքից, որը Ձեզ օգնություն է տրամադրում: Երբ խնամող կողմը պետական օգնություն է ստանում, ամեն ամիս գանձված երեխայի ապրուստադրամի առաջին $50-ը տրամադրվում է խնամող կողմին, իսկ մնացածն օգտագործվում է պետական օգնությունը փոխհատուցելու համար:

Երբ երեխան հեռացվում է տանից՝ կամավոր կերով թե հակառակ իր կամքի, և տեղավորվում մանկատանը, կարող է երեխայի ապրուստադրամի գործ բացվել և հնարավոր է, որ ծնողներից մեկը կամ երկուսն էլ ստիպված լինեն երեխայի ապրուստադրամ վճարել՝ մանկատանը երեխային տրամադրվող խնամքի ծախսերը փոխհատուցելու համար:

Երբ որևէ անչափահաս երեխա միայն «Medi-Cal» է ստանում, գործ է բացվում՝ հայրությունը հաստատելու և բժշկական= օգնության հարցը լուծելու նպատակով: Եթե ծնողը պահանջի, կարող է նաև դատարանի որոշում ընդունվել երեխայի ապրուստադրամի վերաբերյալ:

Դիմումի ձևը կարող եք վերցնել մեր գրասենյակից: